չիւրքն յանձն առին հաստատել զբարեկամութիւն . և ըստ զօրաւոր մուրհակին տուելոյ 'ի մենջ՝ այսուհետև Լատինաց տիրել գերեզմանատան այնմիկ . և եթէ պատահեսցի միջամտութիւն յօտարաց, դարձեալ բռնութիւն համարի . ՌՄԻԶ (1777):

Զայս գիր էր զոր ետուն Լատինք դրել դատաւորին 'ի Դուռն, յոր յայտնապէս նշմարին ստութիւնք Լատինաց, կուսակցութիւնք դատաւորաց եւ Կուսակալին եւ վտանգիլն Հայոց, որպէս տեսաւ 'ի բանից պատմութեանս թարգմանեալ 'ի դատաստանական դրոց:

Ահա այսու եղանակաւ բռնութեամբ յափշտակեցին Լատինք զմի մասն գերեզմանատան Հայոց, այլ թէ քանի գումարս քսակաց վատնեցին, չէ մեզ ասել: Եւ հուսկ ամենեցուն ետուն կոփել քարինս 7 քանդակեալ 'ի վերայ պսակ 'ի ծաղկանց իբրեւ յաղթանակ, և 'ի միջի նոցա գրեալ զթուական տարւոյն (1777), որ յայտ առնէ զժամանակ տիրապետութեան նոցին: Այսոքիկ քարինք կան մնան մինչեւ ցայսօր ժամանակի 'ի գերեզմանատան անդ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Այրն քառասնից: Կանոնական բանք: Նուիրակունք Յովակիմայ և մահ նորին: Նեղութիւն դատաւորին վասն թաղելոյ զմարմին նորա 'ի Ս. Փրկիչ:

ՀԱՅՔ մինչդեռ զբաղեալ կային զդատաստանաւ գերեզմանատան իւրեանց, Լատինք փութացին յարուցանել զայլ խմն վէճ եւս. քանզի 'ի սմին ժամանակի ձեռն արկեալ փոխեցին զդուռն Քառասնից Այրին, զոր Լատինք կուբէն այր կոչեն, արտաքոյ դիւղին Բեթղեհէմի. փակեցին զհին դուռն և բացին զայլ խմն նոր դուռ, եւ հաստատեցին զայն փականօք, և զարդարեցին զայրն կանթեղօք, պատկերօք և այլ եկեղեցական սպասուք, և կամէին տիրել այնմ միայնակ. լուեալ դատաւորին Երուսաղէմի